ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐ ՍԻՍԻԱՆՈՒՄ

Սյունիքի միջին բրոնզեդարյան հուշարձանները դեռևս քիչ են հետազոտված։ Այդ է պատճառը, որ տվյալ ժամանակաշրջանի յուրաքանչյուր հնավայր խիստ հետաքրքիր է ոչ միայն Սյունիքի, այլև Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի միջին բրոնզեդարյան դեռ շատ կողմերով մութ մնացած մշակույթի հետազոտման համար։ Այս բացը մասնակիորեն լրացվեց 1987 թ. Սիսիանում կատարված պեղումների ընթացքում։ Այստեղ փորձարարական կայանի տարածքով անցնող գազամուղի շինարարության ժամանակ ավերվել էին երկու դամբարան։ Հայտնաբերված նյութերի մի մասը՝ կոտրված խեցանոթների բեկորներ, հող ու քարի հետ խառնված վիճակում, մնացել էին տեղում, մյուսները՝ ամբողջական ամաններ, շինարարները մեզ վերադարձրին։ Դամբարանները զուրկ էին արտաքին նշաններից և ընդհանրապես տարածքի մեծ մասը, տարիներ առաջ կատարված հողամշակման աշխատանքների, ինչպես և այգետունկի հետևանքով, փոխել էր իր սկզբնական տեսքը։ Առանձին, դեռևս անխաթար պահպանված հատվածներում միայն դիտվում են ցածր դամբարանթմբեր, որոնց պեղումները չի կարելի հետաձգել։ Ինչ վերաբերում է ծառերի միջև ընկած հողակտորներին, ապա դրանցում, այս ու այնտեղ երևում են խոշոր սալաքարերի առանձին մասեր՝ երբեմնի դամբարանների ծածկասալեր, որոնցից մի քանիսը, ինչպես պարզվեց հետախուզական պեղումների ընթացքում, տեղաշարժվել էին։ Մյուսները բարեբախտաբար իրենց նախկին դիրքով էին պահպանվել։ Այդ քարերից մեկի (դամբարան № 2ա) մի մասն էլ դիտվում էր հողի մակերևույթին՝ № 2 կիստվեր դամբարանից 0,7—1 մ հարավ ընկած հեռավորության վրա։ Ամբողջությամբ ավերված № 1 դամբարանից հայտնաբերվել էին գունազարդ երեք կճուճ, մեկ աղաման և հինգ քրեղան (աղ. II, նկ. 2—10), որոնցից մեծի մեջ (աղ. II, նկ. 5) եղած կարծր կավաքանգվածում 25—30 տարեկան կնոջ խիստ վատ պահպանված գանգ էր դրված[1]։ Դամբարաններից երկրորդը (երկ.՝ 2,7 մ, լայն.՝ 1,4 մ, խոր.՝ 1, 35 մ) մասնակի էր ավերված։ Լրացուցիչ պեղումների ընթացքում պարզվեց, որ հիմնահողային կառուցվածք և հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղություն ունեցող այս դամբարանախցից անխաթար պահպանվել էր հյուսիսային հատվածի 15—20 սմ լայնությամբ նեղ շերտը։ Նշենք, որ հողի ուղղաձիգ կտրվածքում, նախքան պեղումները սկսելը, որոշակի դիտվում էին երկու շերտ։ Դրանցից վերինը, որի հզորությունը 0,8—0,9 մ էր, կազմված էր սևահողից ու դրա հետ խառնված քարերից, իսկ ստորին՝ 0,5 մ հաստություն ունեցողը՝ սոսկ կավահողից։ Հետաքրքիր էր, որ ստորին, խիստ դժվարությամբ հեռացվող, արտակարգ կարծր շերտը ոչ թե սոսկ կավահող էր, այլ՝ կավաշաղախ, որի մեջ զմռսվել էին ոսկորներն ու ուղեկցող նյութերը։ Այստեղ հայտնաբերվեցին նաև կովի, այծի, այծյամի և ընտանի թռչնի ոսկորներ[2], իսկ դամբարանախցի արևմտյան հատվածում՝ 35—40 տարեկան տղամարդու ստորին ծնոտի երկու բեկոր։ Հանված հողի հետ խառնված դուրս էին եկել գունազարդ ու սև փայլեցրած, ինչպես և խամրած մակերեսներով զանազան ամանների բեկորներ։ Այս դամբարանից շինարարները վերցրել էին բրոնզե դաշույնի մաս և մեկ խոշոր կճուճ (աղ. II, նկ. 1, 11—18)։ Դամբարանից 0,7—1 մ հարավ բացվեց 142×68 սմ մեծության մի սալաքար, որի տակ դրված երկու՝ համեմատաբար փոքր (62 և 93 սմ) սալերը ծածկում էին 130×70×40 սմ չափերի, արևելք-արևմուտք ուղղվածության հիմնահողային № 2ա կեղծ դամբարանը։ Հատակագծում ուղղանկյունաձև այս փոսի հյուսիս-արևմտյան անկյունում թաս-գավաթ էր դրված (աղ. III, նկ. 20)։ Դամբարանափոսը լցված էր կավահողի և սևահողի՝ հեշտությամբ հեռացվող խառնուրդով։ Պեղման հրապարակի ընդլայնման շնորհիվ, խրամուղուց 5,2 մ հարավ բացվեցին ևս երեք ծածկասալեր (երկ.՝ 110, 130, 135 սմ, լայն.՝ 45, 55, 90 սմ), իսկ դրանցից 0,6—1,3 մ հարավ՝ հյուսիս-հարավ ուղղվածությամբ ևս մեկ սալաքար (130×45 սմ),

---

1 Բնորոշումները՝ ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի մարդաբանության լաբորատորիայի գիտաշխատող Ա. Փալիկյանի։

2 Բնորոշումները՝ ՀԽՍՀ ԳԱ կենդանաբանության ինստիտուտի գիտաշխատող Ս. Կ. Սեժլումյանի։

որը ծածկում էր համանման ուղղվածության հիմնահողային կեղծ դամբարանը (№ 3ա, չափերը՝ 1,4×0,6×0,5 մ)։ Վերջինիս հյուսիս-արևմտյան անկյունում թեքությամբ մեկ գունազարդ քրեղան էր դրված (աղ. III, նկ. 19)։ Այս կեղծ դամբարանի լիցքը ևս, ունենալով նույն բաղադրությունը ինչ և նախորդը, դյուրությամբ էր հեռացվում։ Ինչ վերաբերում է այս փոսի հարևանությամբ գտնվող երեք ծածկասալերին, ապա դրանց հեռացումից հետո բացվեց հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղված հիմնական՝ № 3, դամբարանախուցը (2×1,05×0,95 մ)։ Սրա արևելյան պատի վրա մեկ շարքով փոքր քարեր էին դրված, մեր կարծիքով, ծածկասալի հենման հրապարակը մեծացնելու և ամրացնելու համար։ Այս դամբարանախցում ևս վերևի 50—55 սմ հզորություն ունեցող շերտը կազմված էր սևահողից ու նրա հետ խառնված տարբեր չափերի քարերից, մինչդեռ ստորինը, որի հաստությունը տատանվում էր 35—40 սմ-ի միջև, դժվարությամբ հեռացվող կավաշաղախն էր, որտեղ դմոսված էին մարդու կմախքն ու դրան ուղեկցող նյութերը։ Դամբարանախցի արևմտյան հատվածում հայտնաբերվեց 35—40 տարեկան տղամարդու դանդ՝ գագաթամասով ուղղված հարավ։ Դրանից հյուսիս դրված էին կողոսկրերը, իսկ արևելք ուղղված դեմքի առջև՝ մեկ թևի բազկոսկրը, կողքը՝ դրված լրոնդաձույլ դաշույն, օղ, ծայրերին՝ թևիկներով, գլանաձև և լծափայտի տեսք ունեցող իրեր։ Կողոսկրերի մոտ կային վանակատե երկու նետասլաքներ և ձիու չորս ոսկոր, իսկ դաշույնի մոտ՝ կճուճ և գավաթ (աղ. III, նկ. 12, 16)։ Դամբարանախցի կենտրոնում կողք-կողքի երկու խոշոր անոթներ էին դրված (աղ. III, նկ. 7, 8), որոնցից մեկի վրայով մարդու ազդրոսկրն էր անցնում։ Այս անոթներին հրպված, մեկ շարքով դասավորված էին թաս-գավաթներ ու քրեղաններ (աղ., III, նկ. 9—11, 13—15, 17—18), որոնց հենված էր երինջի մի կոնքոսկր։ Հայտնաբերվեցին նաև ոչխարի ու այծի ոսկորներ։

Կեղծ դամբարանները, կապված լինելով հիմնական դամբարանախցերի հետ (դժբախտաբար, № 1 դամբարանի փոսորակը ավերվել էր), պաշտամունքային նշանակություն են ունեցել, որը, թերևս, հոգեպաշտական պատկերացումների հետ է առնչվում։ Նման երևույթ դիտված է և 8ա. Հումմելի կողմից, Խանլարի շրջակայքում գտնվող դամբարանների պեղումների ընթացքում[3]։ Ինչ վերաբերում է կավաշաղախի մեջ թաղումներ կատարելուն, ապա նման երևույթ արձանագրված է և Վիրին-Նավերի միջին բրոնզեդարյան դամբարաններում[4]։ Անտարակույս, թաղման այս հետաքրքիր ծեսը, որ առանձին հետազոտության նյութ է, նույնպես հոգեպաշտական պատկերացումների հետ է կապված։

Այլ պատկեր բացվեց վերջին՝ № 4 դամբարանի պեղումների ընթացքում։ Դամբարանը գտնվում էր խրամատի մոտ, նախորդներից շուրջ 300 մ արևմուտք, ուներ 0,7 մ բարձրությամբ ու 9,7 մ տրամագծով դամբարանթումբ։ Վերջինիս կենտրոնական հատվածում, հյուսիս-հարավ երկայնական առանցքով բացվեցին երկու ծածկասալ, որոնցից մեկի եզրը, նախքան պեղումները լսելը, երևում էր։ Այդ սալերը (154×45 սմ և 170×110 սմ) ծածկում էին արևելք-արևմուտք ուղղվածության, կենտրոնում մինչև 0,9 մ լայնացող և ծայրերում նեղացող (40 և 50 սմ) նավակաձև, ոչ խոր (48 սմ) քարարկղը։ Այն լցված էր մաքուր սևահողով, որի մեջ, սակայն, մարդկային ոսկորները բացակայում էին։ Անմիջապես ծածկասալերի տակ դրված էին տաս տարբեր խեցանոթների՝ հիմնականում դամբարանախցի կենտրոնական մասում կուտակված, բեկորներ։ Ինչպես պարզվեց, վերականգնման ընթացքում, այս նյութերը դամբարանախուց էին նետվել նախապես կոտրելուց և որոշ մասեր դուրս նետելուց հետո, որոնք չհայտնաբերվեցին դամբարանթմբի պահպանված լիցքում (աղ. I)։ Այս նյութերից բացի դամբարանախցում հայտնաբերվեցին նաև մեկ այծի 10 ոսկոր. հետևաբար, մարդու կմախքի փտած լինելու հանգամանքը բացառվում է։ Չդիտվեցին նաև դիակիզման հետքեր։ Ուրեմն, տվյալ դեպքում գործ ունենք հուշադամբարանի (կենոտաֆ) հետ։ Հետաքրքիր է, որ դամբարանախցի հատակից 15 սմ հաստությամբ մաքուր հողաշերտ էր ձգվում, որի վրայից էլ հայտնաբերվեցին տարբեր չափերի վեց կճուճների, սկուտեղաձև երկու ամանների, քրեղանի, այսպես կոչված, հնդկական ընկույզի ձև ունեցող անոթի բեկորներ։ Այս նյութերը նախորդ դամբարաններից հայտնաբերվածների հետ համեմատած ավելի պարզունակ և ժամանակագրական տեսակետից համեմատաբար վաղ տեսք ունեն։ Դրանցից վերջինը հարթ հատակով, տաշտակաձև աման է, որի շուրթը երկու հակադիր կողմերից (երկայնական մասում) ներս է սեղմված։ Ամանն

---

[3] Я. И. Гуммель, Археологические очерки, Баку, 1940, с. 26, 114. 115.

[4] А. Е. Симонян, Могильник эпохи бронзы Верин-Навер (Краткие сообщения Института археологии АН СССР, М., 1983, № 176, с. 91—95).

ունի դեղնակարմրավուն, անփայլ, լլոսված մակերես (աղ. I, նկ. 1)։ Ամանների այս տեսակը հանդիպում է ինչպես վաղ, այնպես էլ ուշ բրոնզի I փուլով թվագրվող հուշարձաններում, ինչը և թույլ չի տալիս այդպիսիները սով կճուճի քննության ընթացքում։ Սա ունի ուղիղ բարձրացող վզով ավարտվող փքուն իրան, որը զարդարված է սանրատամ նախշով ստացված անկյունաձև պատկերներով և անոթի իրանը դոտևորող՝ հորիզոնական գծերով։ Գծե-



Աղյուսակ I։

դիտել իբրև թվագրող նյութ։ Այս տեսակետից հետաքրքիր են կճուճները։ Նորսը լրացուցիչ հարդարումից զուրկ, կարմիր ու դարչնա-կարմրավուն փշփշոտ մակերեսներով, դուրս թեքվող, իսկ մեկ դեպքում կլորացող շուրթով, գնդաձև (աղ. I, նկ. 7) ու փքուն իրաններով (աղ. I, նկ. 2, 3, 5), դեպի հատակը խիստ նեղացող անոթներ են և համեմատաբար փոքր հատակներ ունեն, որով և կապվում են վաղ բրոնզեդարյան խեցեղենի հետ։ Այս կապը առավել ցայտուն է դրսևորվում սև խամրած մակերեսներից ցած երկու փոսիկներ են արված (աղ. I, նկ. 4)։ Որպես վաղ բրոնզեդարյան խեցեղենի բնորոշ զարդանախշ, այսօրինակ փոսիկները, ինչպես ցույց են տալիս Բերքաբերի, Բեղենիի դամբարանաթմբերի և Իլտո (Կախեթում) բնակատեղիի պեղումների արդյունքները[5], շարու-

Լրաբեր 7—7

---

5 Ս. Ե. Գ ա ս պ ա ր յ ա ն, Դամբանաբլուրի պեղումներ Իշևանի շրջանի Բերքաբեր գյուղում [«Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1987, № 1, էջ 229—233, աղ.

տակում են հարատևել և մ. թ. ա. II հազ. սկզբում։

Կճուճներից վերջինը սև, անփայլ, մրոտված մակերեսով խոհանոցային անոթ է, որի կլորացող իրանն ավարտվում է կարճ վզով և ներքին մակերեսին ակոս հանված, թեթևակի դուրս հակվող շրթով (աղ. I, նկ. 6)։ Այս հատկանիշը (շրթին՝ ակոսադիծ) անծանոթ է վաղ բրոնզի խեցեղենին. այն հանդես է գալիս միջին բրոնզում։

Սանրատամ նույն զարդն ունի և քրեղանը, որի մակերեսը նույնպես սև ու անփայլ է, իսկ կլորացող իրանն ավարտվում է ուղիղ, կարճ վզով (աղ. I, նկ. 8)։ Ամանների այս ձևը բնորոշ է միջին բրոնզի դարաշրջանին։



Աղյուսակ II։

ինչ վերաբերում է սանրատամ կետանախշին, ապա այն, ինչպես ցույց են տալիս Իլտոյից, Բեղենիից և այլ հնավայրերից գտնված նյութերը, հանդես է գալիս մ. թ. ա. III հազ. վերջ—II հազ. սկզբում։ Այս տեսակետից շատ հետաքրքիր են Ցա. Հումմելի՝ Խանլարի շրջակայքում և Գյանջա-չայի հովտում պեղած № 12 և № 139 դամբարանների հետազոտու-

II, նկ. 1, 3, 4], Ш. Ш. Дедабришвили, Памятники эпохи ранней и средней бронзы (Труды Кахетской археологической экспедиции, т. I, Тбилиси, 1969, рис. 13_5–$_{10}$); Г. Ф. Гобеджишвили, Бедени-культура курганных погребений, Тбилиси, 1980, табл. XXXI—XXXIII.

թյունների արդյունքները։ Դրանցից հայտնաբերված նյութերը, զարդարված լինելով սանրատամ անկյունապատկերներով, թվագրվում են մ. թ. ա. III—II հազ. սահմանագլխով։ Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ № 139 դամբարանը իջեցված է եղել վաղ բրոնզեդարյան կացարանի մեջ, որն իր հերթին ծածկվել է մ. թ. ա. II հազ. I կեսի կառույցով[6]։

Սիսիանի № 4 դամբարանից հայտնաբերված նյութերն, այսպիսով, հանդես բերելով վաղ և միջին բրոնզի դարաշրջաններին բնորոշ հատկանիշներ, համաժամանակյա մյուս հուշարձանների օրինակով կարող են դասվել անցումային ժամանակաշրջանին պատկանող հնավայրերի շարքում և թվագրվել մ. թ. ա. III—II հազ. սահմանագլխով։ Այդ ժամանակաշրջանի հուշարձաններում իրենց զուգահեռներն ունեն և կարմիր, անփայլ մակերեսով, ցածր նստուկով և սահուն կլորացող իրանով սկուտեղաձև ամանները (աղ. I, նկ. 9)։ Այդպիսիները հայտնի են նաև Ուղերլիկ-Թեփեի ստորին շերտից (մ. թ ա. XX—XVIII դդ.), Բեղենիից[7], իսկ Շիրակավանի և Դոլինյան բնակավայրերի վաղ բրոնզի դարաշրջանով թվագրվող նմուշները, որոնք որոշ առանձնահատկություններ են դրսևորում, կարող են նախաձև դիտվել[8]։

Սիսիանի մյուս դամբարաններից հայտնաբերված նյութերը՝ զենքեր ու տարատեսակ խեցանոթներ, համաժամանակյա են։ Բրոնզաձույլ դաշույնները երկուսն են։ Մեկը թերի է, ունի հարթ լեզվակ՝ դաստակի ամրացման համար նախատեսված միջանցիկ անցքով, իսկ լայն, թեքվող ուսերով տերևաձև շեղբը կտրվածքում ոսպնյակաձև է (աղ. II, նկ. 1)։ Նույն ձևն ունի և դաշույններից երկրորդը, տարբերությամբ, որ սրա շեղբը կտրվածքում ռոմբաձև է, իսկ շեղբի հիմքամասում և լեզվակի վրա արված երեք անցքերում բրոնզաձույլ փոքր գամեր են պահպանված։ Շեղբի հիմքամասում դիտվող որոշակի հետքը ցույց է տալիս, որ դաստակն ունեցել է ձևավոր գոգավորված տեսք (աղ. III, նկ. 1)։ Ամենայն հավանականությամբ, զարդարելու կամ զարդարելու նպատակին են ծառայել բրոնզե թիթեղներից պատրաստված, ծայրերում աստիճանաբար նեղացող օղակը (աղ. III, նկ. 2), լծի ձև ունեցող իրը (աղ. III, նկ. 3) և խողովակը, որը ծայրերում իրարից հեռացող տափակ թևիկներ ունի (աղ. III, նկ. 6)։ Զենքերից վերջին երկուսը վանակատից պատրաստված, հիմքամասում ուղղանկյունաձև հանված-քով նշաձև նետասլաքներն են (աղ. III, նկ. 4, 5), ինչպիսիք հաճախ են հանդիպում բրոնզի և երկաթի դարաշրջանների տարբեր փուլերով թվագրվող հուշարձաններում։ Նույնը կարելի է ասել և օղակի վերաբերյալ։ Ինչ վերաբերում է մյուս իրերին, ապա դրանցից խողովակի տեսքն ունեցողը, մեջ հայտնի տրվյալներով, դեռևս եղակի է իր տեսակում, իսկ լծի ձևով պատրաստվածի ճշգրիտ զուգահեռներն են Լճաշենից՝ միջին բրոնզի վաղ փուլով թվագրվող (մ. թ. ա. II հազ. սկիզբ) № 40 դամբարանից հայտնաբերվածները, որոնք սկզբող հնագետի կարծիքով ականջօղեր են։ Նշենք, որ ինչպես այդ, այնպես էլ Լճաշենի № 123 դամբարանից (մ. թ. ա. XXI—XIX դդ.), Էջմիածնի Մոխրաբլուրից[10], Նախիջևանի Կարմիր-Վանքից, Էլառից, Կամոյից[11] և համաժամանակյա այլ հնավայրերից հայտնաբերվել են տափակ լեզվակով համանման դաշույններ, որոնք մեկական միջանցիկ անցքեր ունեն։ Այդուհանդերձ այս դաշույնները ստույգ թվագրող նյութ դիտվել չեն կարող, որովհետև հանդիպում են միջին բրոնզի դարաշրջանի բոլոր փուլերում։ Հետևաբար, այս նյութերի թվագրությունը, որը կարևոր է Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի միջին բրոնզեդարյան մշակույթի հետազոտության համար, տրվում է խեցեղենի օգնությամբ։ Դրանցից խոշոր կճուճներն ու փոքր չափերի կարասաձև անոթները, այսպես կոչված «հիդրիաներն» (աղ. II, նկ. 2, 11, 13, աղ. III, նկ. 7, 8) մի դեպքում կլորացող իրաններով, միջին մասում թեթևակի գոգավորվող վզերով և դուրս ճկվող շուրթերով հարթահատակ կավամաններ են, մյուսում՝ համեմատաբար լայնաբերան են ու ձվածիր իրան ունեն։ Անոթների մի մասի

---

6 Я. И. Гуммель, Некоторые памятники раннебронзовой эпохи Азербайджана (Краткие сообщения Института истории материальной культуры, 1948, вып. XX, с. 26—28, рис. 11—12).

7 К. Х. Кушнарева, Поселение эпохи бронзы на холме Узерлик-тепе около Агдама [Материалы и исследования по археологии СССР (այսուհետև՝ МИА). 1959, № 67, рис. 96]; Г. Ф. Гобеджишвили, նշվ. աշխ., рис. 36, 37, с. 100—101.

8 Р. М. Муничаев, Кавказ на заре бронзового века, М., 1975, рис. 80_1.

9 Հ. Հ. Մնացականյան, Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները (ՊԲՀ, 1965, № 2, էջ 99—101, աղ. 1, նկ. 3, 4, 13)։

10 Նույն տեղում։

11 Է. Վ. Խանզադյան, Էլառ-Դարանի, Երևան, 1979, էջ 69, նկ. 95, 96։

շուրթի ներսից ակոս է արված։ Բրուտի անիվի վրա պատրաստված, կտրվածքում կարմիր գույնի այս անոթների մակերեսների կարմիր հիմնագույնը զարդարված է սև ներկով ստացված բազմաշար, ալիքաձև, ուղղահայաց ու խաչաձև հատվող գծերով, ինչպես և թերավարտ, դեռևս չձևավորված մեանդրներով։ Հաճախ խումբ-խումբ գծիկներով են զարդարված և անոթների շուրթերը։ Այս անոթներից ձվածիր տեսք ունեցողները իրանի ձգված ու վիզն տեսքով որոշ նմանություն են դրսևորում Ուզերլիկի I շերտից հայտնաբերվածի, համեմատաբար կոպիտ, երբեմն եռամատ ուլիճի զարդեր ունեցող անոթների հետ, որոնք, սակայն, շարունակելով վաղ բրոնզի ավանդույթները, զուրկ են ներկով ստացված զարդերից։ Նշենք, որ գունազարդ խեցանոթների բեկորների զարդանախշերը, կրկնելով Սիսիանի նմուշներին, Ուզերլիկում հանդիպում են II շերտից սկսած[12]։ Այս հանգամանքը, սակայն, չի նշանակում, թե սոսկ այդ պատճառով պարտավոր ենք երիտասարդացնել Սիսիանի նյութերի թվագրությունը, որոնց աւավել վաղ զուգահեռները (մ. թ. ա. XXI—XIX դդ.) կան այս դամբարաններից ոչ հեռու գտնվող «Զորաքարերը» հնավայրի նյութերում[13]։ Բացառված չէ, որ այս նորահայտ դամբարանները այդ հուշարձանի դամբարանադաշտի մի հատվածը լինեն։ Նույն ժամանակաշրջանի (մ. թ. ա. II հազ. սկիզբ) նյութեր են հայտնաբերված և Ախլաթյան գյուղում, որոնց շարքում առկա են Սիսիանի նյութերն ու դրանց զարդերը պատճենող գունազարդ ամաններ[14]։ Ավելին, Այգեձորի V շերտից հայտնաբերված նյութերի շարքում, որոնք թվագրվում են մ. թ. ա. XXI—XIX դդ., առկա են և գունազարդ խեցանոթների մասեր[15]։ Նույն երևույթն է դիտվում և Գառնիում, Զրահովտի բնակավայրում, ուր մ. թ. ա. III հազ. վերջին պատկանող խեցեղենի հետ հայտնաբերված են և գունազարդ անոթների բեկորներ[16]։ Այսօրինակ պատկեր է դիտված և Բեշտաշենում ու այլ հնավայրերում[17]։ Տեղին է նշել, որ Խանլարի № 12 դամբարանի քրեղաններից մեկի սև դույնի մակերեսը զարդարված է կետագծման եղանակով ստացված թերի մեանդրաձև պատկերներով, որոնք պատճենում են Սիսիանի նյութերի զարդաձևը։ Խանլարի այս դամբարանը թվագրվում է մ. թ. ա. III—II հազ. սահմանագլխով։ Կլորացող իրանով այս անոթներից սոսկ չափերի փոքրությամբ են առանձնանում երկու գունազարդ կճուճները (աղ. II, նկ. 3, 4)։ Այսօրինակ անոթների մյուս խումբն են կազմում սև փայլեցրած (աղ. II, նկ. 14) և խամրած (աղ. III, նկ. 12) մակերես ունեցողները։ Դրանցից առաջինը ուսամասում փքուն իրանով, կենտրոնում գոգավորվող կարճ վզով և դուրս ճկվող շուրթով անոթ է։ Ուսը զոտևորված է փորագիր եղենաշարով լցված երկու ժապավեններով, իսկ իրանը՝ նույն եղանակով ստացված դույզ-դույզ տարված կամարաձև պատկերներով։ Մանրամասներից վերջինը կոտրվածքում դիտվող երկգույնն է, որը ստացված է սև փայլեցրած մակերեսի և շագանակագույն աստառի համադրությամբ։ Այս հատկանիշը բնորոշ է վաղ բրոնզի դարաշրջանին, հետևաբար տվյալ դեպքում առկա է նախկին ավանդույթների շարունակություն։ Ինչ վերաբերում է կճուճներից երկրորդին, ապա սրա ձգված, թեթևակի կլորացող իրանը զարդարված է. նույն փորագիր եղենաշարով, որոնք այս դեպքում, սակայն, անկյունաձև պատկերներ են ձևավորում։ Դրանց վերին շարքը գագաթներով հպվում է վզի հիմքը զոտևորող-բեկյալներով ստացված գծին։ Այս կճուճների ձևն ու զարդանախշն են պատճենում Ուզերլիկի I շերտից, Վարդենիսից[18], Գրամփա և Աղջաղալա գյուղերի միջև ընկած դամբարանադաշտից, Էլառի № 25 դամբարանից[19], Գուրուչայի և Կենդելչայի միջագետքում գտնվող Ղարաքեփեկթեփեսի հնավայրից[20], Թռեղքի XLI և այլ դամբարանաթմբերից հայտնաբերվածները[21]։ Վերոհիշյալ հու-

---

[12] К. Х. Кушнарева, Новые данные о поселении Узерлик-тепе, около Агдама (МИА, 1965, № 125, рис. 12_5—7).

[13] *Օ. Ս. Խնկիկյան, Սիսիանի Զորաքարերը («Հայաստանի բնություն», 1984, № 4, էջ 33—34, 51)։*

[14] *Ախլաթյանի նյութերը հրատարակված չեն։*

[15] С. А. Есаян, Стратиграфия расписной керамики Айгеванского поселения (ՊԲՀ, 1981, № 2, աղ. II_2, էջ 195—203).

[16] *Է. Վ. Խանդաղյան, Գառնի IV, Երևան, 1969, էջ 109, նույնի՝ Զրահովտի պեղումները («ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 1977—78 թթ., դաշտային աշխատանքների թեզիսներ»), Երևան, 1979, էջ 9—10։*

[17] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, с. 112, 116—117, табл. CXXI, CXXII.

[18] К. Х. Кушнарева, Новые данные..., рис. 28_4, 31.

[19] *Է. Վ. Խանդաղյան, Էլառ-Դարանի, նկ. 88, 89։*

[20] Г. Исмаилов, Следы древнейших культур в междуречье Гуручай и Кенделчай, Баку, 1981, табл. IX.

[21] Э. М. Гогадзе, Периодизация и генезис курганной культуры Триалети, Тбилиси, 1972, табл. 30, рис. 2.

շարձաններում իր դուգահեռներն ունի և ձեռքի կոպիտ աշխատանքի արդյունք հանդիսացող, գնդաձև իրանով և դուրս թեքվող վզով կճուճը, որի դեղնադորշավուն մակերեսը ստորին հատվածում մրածածկ է (աղ. II, նկ 12)։

կլորացող շուրթով։ Այլ դեպքերում շուրթը ձևավորում են դեպի ներս թեթևակի թեք կտրած կողերը։ Գունազարդ քրեղանների մակերեսի կարմիր հիմնագույնը զարդարված է սև ներկով ստացված, ուղղաձիգ իջնող, խումբ-խումբ



Աղյուսակ III։

Խեցանոթների հաջորդ խումբն են կազմում գունազարդ (9 օրինակ) և սև փայլեցրած մակերեսներով (6 հատ) քրեղանները։ Երկու խմբերն էլ ունեն հարթ հատակների վրա իջնող կիսագնդաձև իրաններ, որոնք ավարտվում են կարճ, ուղիղ բարձրացող, հազվազեպ՝ դուրս

տարված ալիքաձև (աղ. II, նկ. 5—7, 9—10, 16, աղ. III, նկ. 13), ինչպես նաև անկյուններ կազմող (աղ. II, նկ. 17) կամ շրթի հետ եռանկյունիներ ձևավորող (աղ. III, նկ. 19) բազմաշար գծերով։ Շրթի տակով սովորաբար անցնում են մեկ կամ երկու ակոսագծեր։

Քրեղանների այս տեսակներն ու զարդանախշերը տեսնում ենք Էլառում, Գառնիում, որտեղ դրանք հանդես են գալիս վաղ բրոնզի ավանդույթները շարունակող սև մակերես ու փորագիր զարդանախշ ունեցող խեցեղենի համադրությամբ[22]։ Այստեղ նույնպես տեսնում ենք անկյունաձև պատկերներ կազմող, խումբ-խումբ գծերով արված պատկերներ, որոնք բնորոշ են դառնում ուշ բրոնզի համար, ստացված, սակայն, փայլանախշման եղանակով։ Այդպիսին առկա է և Մաչաթիա-Էլյազիզի շրջանի Յուկարի-Սյուզմելի բնակավայրի վաղ բրոնզի III փուլով թվագրվող նյութերում[23]։

Սև փայլեցրած քրեղաններից սոսկ մեկն ունի շրթի տակով անցնող ակոսաղոտի։ Այս քրեղանի մյուս առանձնահատկությունը նրա թեթևակի ընդգծված նստուկն է, որը, դատելով ներսի մակերեսին պահպանված հետքերից, հետո է իրանին ամրացվել։ Ամանի մակերեսը զարդարված է երկշար, կամարաձև դոտիներով, որոնցից ներքևինը հոծ, իսկ վերևինը միաշար կետերով է զարդարված (աղ. II, նկ. 15)։ Մյուս քրեղանները զարդարված են կամարաձև (աղ. III, նկ. 9, 10) և անկյունաձև պատկերներով, մեկ դեպքում՝ իրանը գոտևորող հորիզոնական գծերով (աղ. III, նկ. 11, 14)։ Այս քրեղանների ու դրանց զարդանախշերի ճշգրիտ զուգահեռները կրկին Ուզերլիկի I շերտի նյութերում կան, որոնք թվագրվում են մ. թ. ա. XX—XVIII դդ.։ Նշենք, որ հոծ կետագարդերով ստացված անկյունաձև պատկերներով են զարդարված Իլտո բնակավայրի II և մասամբ III շերտի խեցանոթների բեկորները։ Այս նյութերը թվագրվում են մ. թ. ա. III հազ. վերջը և II հազ. սկիզբն ընկած ժամանակաշրջանով։

Խեցանոթների վերջին խումբն են կազմում թաս-գավաթներն ու «աղամաններ»։ Առաջինները կլորացող ու թեթևակի ձգված իրաններով, հազիվ նշմարվող շուրթերով ամաններ են, որոնք կոտրվածքում մուգ շագանակագույն երանգ ունեն։ Սև փայլեցրած մակերեսները զարդարված են նույն փորագիր եղևնաշարով ստացված անկյունաձև (աղ. III, նկ. 16), աստղ ձևավորող բեկյալներով (աղ. III, նկ. 15), երկծնկաձև պատկերներով (աղ. III, նկ. 17) ու հոծ կետերով ստացված կամարաձև զարդերով (աղ. III, նկ. 20)։ Այս զարդաձևերը, բացառությամբ երկծնկաձև նախշի, վերևում քննվել են։ Ինչ վերաբերում է նշված զարդին, ապա այն նույնպես տեսնում ենք Ուզերլիկի I շերտում, տարբերությամբ, որ այն ստացված է սոսկ զուգահեռ տարված երկու գծերի միջոցով և զուրկ է նրանց մեջ լցված եղևնաշարից[24], որոնք առկա են այլ անոթների վրա։ Կետերով ստացված կամարաձև զարդն իր զուգահեռներն է գտնում արդեն Ուզերլիկի II շերտի նյութերում, որոնք առավել կատարյալ են։ Նկատենք, սակայն, որ Ուզերլիկի II շերտի նյութերի զարդանախշում, ինչպես և Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձաններից հայտնաբերված խեցանոթների վրա, դիտվում է և սպիտակ դանդվածի լցվածք, որը չի նկատվում Սիսիանի նյութերի վրա։ Ավելին, Ուզերլիկի այդ ժամանակաշրջանի նյութերին, ինչպես և այլ՝ մ. թ. ա. XVIII—XVII դդ. հնավայրերից հայտնաբերվածներին առավել բնորոշ է իրարից հեռու ատամնաշարի երկու կողմերում դասավորված մանր կետաղարդով ստացված նախշը, որը, ատամնաշարերի միջև ընկած տարածությանը նեղ, անզարդ ժապավենի ձև տալով, միաժամանակ ատամնաշարին երկշարք, առանձնացող դարդի տեսք է հաղորդում[25]։ Այս հատկանիշները նույնպես չեն դիտվում Սիսիանի նյութերի վրա, որոնք իրենց զարդաձևով կապվում են Իլտորի II և III շերտերի հետ և, հետևաբար, ավելի վաղ տարիք ունեն, քան Ուզերլիկի II շերտի նյութերը։ Ինչ վերաբերում է ձեռքի կոպիտ աշխատանքի արդյունք հանդիսացող «աղամաններին», որոնք գրեթե ուղղաձիգ (աղ. II, նկ. 8, 18) կամ թույլ կլորացող կողերով (աղ. III, նկ. 18), թեթևակի սրվող շրթով, սև կամ դեղնավարդագույն մակերեսներով ամաններ են, ապա դրանք թվագրության համար էական նշանակություն չունեն։ Նյութերի քննությունն այսպիսով թույլ է տալիս այս դամբարանները թվագրել մ. թ. ա. II հազ. սկզբով, առավել ընդլայնված՝ նրա I քառորդով։

Հանրագումարի բերելով Սիսիանի երեք տեսակի դամբարաններից (քարարկղ, հիմնական և կեղծ-հիմնահողային) հայտնաբերված նյութերի հետազոտությունների արդյունքները, նկատում ենք, որ դրանք պատկանում են վաղ բրոնզից միջինին անցման և միջին բրոնզի սկզբնական փուլի մշակույթին։ Բերված զուգահեռները միաժամանակ թույլ են տալիս համաձայնել այն հետազոտողների կարծիքին, որոնք «կարմիր-բերդյան» և «սևան-ուզերլիկյան» խմբի նյութերը դիտում են իբրև մեկ միասնական մշակույթ։

Օ. Ս. ԽՆԿԻԿՅԱՆ.

---

22 Է. Վ. Խանզադյան, Գառնի IV, աղ. XXVIII, նկ. 4, 7, 10։

23 C. A. Burney, Eastern Anatolia in the Chalcolithic and Early Bronze Age („Anatolian studies". vol. III, 1958, fig. 276).

24 К. Х. Кушнарева, Новые данные..., рис. 17_{17}.

25 Նույն տեղում, էջ 84—86։